ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

N 470 Ա «25» հունիսի 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Հիմնադրամ) կողմից Հիմնադրամի կարիքների համար տվյալների հավաքագրման համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից):

Ընթացակարգի գնահատման նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտում՝ ապրանքի ամբողջական նկարագրում առաջարկվող ապրանքի մոդելը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը հստակ նշված չեն, ինչի արդյունքում նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և Մասնակցին ուղարկվել է ծանուցում՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Վերը նշված ծանուցմանն ի պատասխան Մասնակցի կողմից www.e-auction.am համակարգով ապրանքի ամբողջական նկարագրում շտկմամբ առաջարկվող ապրանքի մոդելի փոխարեն ներկայացվել է «HP PROLIANT», որի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այն ոչ թե կոնկրետ ապրանքի մոդել է, այլ ապրանքատեսականու շարքի անվանում, որն իր մեջ ներառում է 4 տարբեր մոդելներ: Թեև մասնակցի կողմից հրավերի պահանջներին համապատասխան չի ներկայացվել ապրանքի մոդելը, այնուամենայնիվ հանձնաժողովը ուսումնասիրության առարկա է դարձրել «HP PROLIANT», ապրանքատեսականու բոլոր չորս մոդելները: Ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովն արձանագրել է, որ ապրանքատեսականու բոլոր չորս մոդելները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, համապատասխանաբար պատվիրատուի պահանջների հիմքում ընկած բնորոշ տեխնիկական չափորոշիչները չեն կիրառվում HP PROLIANT սերվերի կողմից:

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31 K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
(37410) 247 123 (37410) 247 123

Վերոգրյալի արդյունքում հանձնաժողովը որոշել է «Գոռ Նիկողոսյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով Օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու դեպքերն, այդ թվում՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում (...):

Տվյալ դեպքում, Մասնակիցը հայտ է ներկայացրել՝ մասնակցելու ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին, որպիսի հայտում առկա են եղել անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջներին, ինչի մասին վերջինս պատշաճ ծանուցվել է, սակայն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որի հետևանքով վերջինիս հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, այսինքն վերջնանշված գործողությունները հանգեցրել են գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալից ելնելով՝ հարկ է արձանագրել, որ ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի առնչությամբ առկա է Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու փաստական և իրավական անհրաժեշտ բոլոր հիմքերը, որոնք նախատեսված են «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Աղյուսակ

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/3	1	տվյալների հավաքագրման համակարգ	3000000	«Գոռ Նիկողոսյան» ԱՁ	35262285	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Չեխովի փ., շ.16բն. 10	16.02.2025թ.	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ	Առկա չէ

_____

ստորագրություն

Ս. ԲԱՂԻՆՅԱՆ